

5.10. 2000թ. Սիդնեյի ամառային 27-րդ օլիմպիական խաղերի մասին

2000թ. սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 1-ը Սիդնեյում կայացած ամառային 27-րդ օլիմպիական խաղերին, համաձայն ՀՀ Կառավարության 28.08.2000թ. թիվ 579 որոշման, Հայաստանի պատվիրակությունը պետք է բաղկացած լիներ 65 մարդուց: Ըստ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության տվյալների, օլիմպիական խաղերին մասնակցել են 64-ը: Այդ թվում` ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանության 6 ներկայացուցիչ, ՀՀ ազգային օլիմպիական կոմիտեի 5 ներկայացուցիչ, 1 շեֆ միսիա, 1 ատաշե, մարզածների 8 պաշտոնական ներկայացուցիչ, 9 մարզիչ, 25 մարզիկ և 2 մարզուհի, 3 մարզական բժիշկ, 2 մարզական լրագրող և 2 մշակույթի գործիչ:

Օլիմպիական խաղերին մասնակցելու չի մեկնել 1 մարզիկ, իսկ երկու ծանրամարտիկ Սիդնեյում չեն մասնակցել մրցումներին:

Ըստ առանձին սպորտաձևերի մասնակիցների բաշխվածությունը հետևյալն է.

	Մարզածն	Մասնակիցներ	
		տղամարդ	կին
1	Բռնցքամարտ	3	
2	Ազատ ոճի ըմբշամարտ	3	
3	Հունա-հռոմեական ոճի ըմբշամարտ	5	
4	Ձյուղո	1	
5	Հրաձգություն	1	
6	Ծանրամարտ	4	
7	Թենիս	1	
8	Թեթև ատլետիկա	2	1
9	Ջրացատկ	1	
10	Լող	1	1
11	Բայդարկա` 1 տեղանոց	1	
	Ընդամենը	23	2

Ամառային 27-րդ օլիմպիական խաղերում Հայաստանի մարզիկները բավարարվեցին 11 մարզածների նախնական տարբեր փուլերում տարած հաղթանակներով: Հայաստանին միակ մեդալը (բրոնզե) բերեց ծանրամարտիկ Ա. Մելիքյանը (77 կգ քաշային կարգ): Ըստ առանձին սպորտաձևերի մյուս մարզիկների արդյունքները հետևյալն են. երկուսը զբաղեցրել են 5-րդ հորիզոնականը, 2-ը` 7-րդ, 2-ը դուրս են մնացել հետագա մրցապայքարից քառորդ եզրափակիչում, 13-ը` մրցումների նախնական փուլից, 3-ը` առաջին փուլից: Երկու մարզիկ որակազրկվել են` մեկը մրցումներից հետո դոպինգ-ստուգման արդյունքով, մյուսը` կիսաեզրափակիչում: